«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողի մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընդացքում

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝Նալբանդյան Տաթևիկ

Ուսումնական հաստատություն՝Երևանի Դարարվեստի պետական քոլեջ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1.ԳԼՈՒԽ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐՍ **……6**

2.ԳԼՈՒԽ 1.1ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ-……9

3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**……14**

ԳԼՈՒԽ 3 ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……..16

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……18

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Հանրակրթական դպրոցում աշակերտների գեղագիտական և արժեքային համակարգի դաստիարակության ընդհանուր համակարգում նշանակալից դեր ունի գեղարվեստական կրթությունը:Նրա նշանակությունը անհատի զարգացման ու ձևավորման մեջ բխում է գեղագիտական բուն էությունից, գեղագիտական հարաբերությունների բազմակողմանիությունից՝ կապված մարդու, բնության,արվեստի, հասարակության, ինքն իր հետ ունեցած փոխհարաբերություններից, ինչն ընդգրկում է անհատի գիտակցության, արժեքային համակարգի ձևավորման և գործունեության ողջ բնագավառը: Ժամանակակից դպրոցում կերպարվեստի դասավանդման ընթացքում սովորողների գիտելիքների և համապատասխան կարողությունների ձևավորման պահանջների մեջ առանցքային տեղ ումեն արժեքներն ու արժեքային համակարգի ձևավորումը, որի կարևորությունը չի կարելի թերագնահատել: Այս իրողությունը հիմնականում բխում է կրթության արդիականացման հայեցակարգի ներկայիս պահանջներից: Արդի գրական կրթության հիմնական խնդիրը երեխայի ինքնազարգացման ապահովումն է, երեխաների կողմից հոգևոր արժեքների յուրացումը, նրանց գեղարվեստական- գեղագիտական ճաշակի և ստեղծագործական ներուժի, խոսքի զարգացումը: Հատկապես կրտսեր դպրոցականների արժեքների ձևավորման հարցումանժխտելի է վերջինիս մեծ դերը: Հենաբար՝ կարևորվում է առարկայի դասավանդման ընթացքում ուսումնական նյութերի ուսուցումը սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն ի նպաստ դարձնելու, դրա հնարավորություններն ընդլայնելու հնարավոր ուղիների վերհանումը, նախանշումը և մշակումը՝ իբրև առարկայի դասավանդման արդյունավետ գործընթացի ապահովման երաշխիք: Ըստ էության, առարկայի դասավանդումը պետք է դառնա ակտիվ և ձևավորող գործընթաց: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, որին պետք է ծառայեցնել ուսումնական առարկաների դաստիարակչական ողջ ներուժը, միևնույն ժամանակ՝ ապահովել դաստիարակության ձևավորող և զարգացնող բնույթը:

Ուսումնասիրության նպատակը: Մեր կողմից ներկայացվող սույն հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է կերպարվեստի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցի ուսումնասիրությանը՝ առարկայի դասավանդման գործընթացի արդիականացման հնարավորությունների բացահայտման համատեքստում:

Ուսումնասիրության խնդիրները: Ելնելով աշխատանքի նպատակից՝ առաջադրվել ենհետևյալ խնդիրները.

1.Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տեսա-մեթոդական գրականություն:
2.Պարզել «արժեքային համակարգ» հասկացությունը և դրա բովանդակությունը կերպարվեստի դասավանդման համատեքստում:
3.Վերհանել կերպարվեստի դասավանդման գործընթացում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը, ուղիներն ու մեթոդները

Նպատակը

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնականհաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնց դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներիցհոսող» հերոսների վարքագծում:

Խնդիրներ

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

ԳԼՈՒԽ 1. Սովորողի արժեհամակարգի վրա ազդողգործոնները

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի

նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»: [1]Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):

Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն:

[1]Մ.Մոնտեն «Փորձեր» 2016 էջ 26

Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

ԳԼՈՒԽ 2

1.1ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը մշտապես եղել են մանկավարժական գիտության ամենատարբեր ուսումնասիրությունների կիզակետում: Պատահական չէ, որ ներկայումս մանկավարժության մեջ ձևավորվել են արժեքային համակարգի տարբեր ըմբռնումներ: Այդուհանդերձ՝ ընդունված է

«արժեհամակարգ» հասկացության այն ընկալումը, որի համաձայն՝

«արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար»[1]:

Ընդհանուր առմամբ՝ արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ինչպես ձեռք բերված գիտելիքի և տեղեկատվության, այնպես էլ սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքային համակարգը կազմող համախմբերից յուրաքանչյուրի ձևավորման խնդիրները լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնա- դաստիարակչական գործընթացի միջոցով: Այս հարցում անգնահատելի է դպրոցի դերը, որտեղ ուսումնական բոլոր առարկաների դասավանդման ընթացքում կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման տարբեր խնդիրների լուծումը, այդ ընթացքում սովորողներին փոխանցվող գիտելիքները, տեղեկատվությունը դառնում են անցյալի փորձի յուրացման, ազգային գիտակցության ձևավորման, հայրենասիրության և արժեքների ու արժեքային տարբեր որակների ու կողմնորոշումների արմատավորման հիմքը:

Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը հիմնավորվում է մի կողմից հասարակության արմատական փոփոխությունների, մյուս կողմից՝ դրանից բխող՝ կրթական համակարգի վերակառուցման, արդի կրթական պահանջներին այն համապատասխանեցնելու հանգամանքով: Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը փաստվում է նաև այն իրողությամբ, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար

[1] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak, էջ 396-401:

ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևորվում է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը[2]:

2004 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց «Հանրակրթության պետական կրթակարգ» և «Պետական կրթական չափորոշիչ» կոչվող նորմատիվային փաստաթղթերը, որոնցով ամրագրվեց արժեքային համակարգ բաղադրիչի ներառումը հանրակրթական դպրոցում, իսկ 2006 թվականի նոր ուսումնական տարուց արդեն դրանք գործեցին: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման ու ապահովման համար ՀՀ հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Կրթակարգով ամրագրվեց ապագա շրջանավարտի կատարելատիպը, որն առավելապես արժեքային համակարգի չափանիշներ էր պարունակում[3]: Ըստ էության, դրվեց կրթական լավ համակարգ ունենալու պահանջ, որը ենթադրում էր ոչ միայն գիտելիքի փոխանցում, կարողություն-հմտության ձևավորում, այլև սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրների կարգավորում: Սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին հիմնահարցերն էին.

- ✓ լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,
- ✓ դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

[2] Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը 19-րդ դարում» գիտակրթական հանդես, հ. 1, Երևան, 2014, էջ 61:

[3] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիրբնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak , էջ 359:

[4] Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004, էջ 43:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկը, գերնպատակը, թերևս, սովորողի մեջ ազգային բարոյական և հոգևոր արժեքների կերտումն ու զարգացումն է, բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումը: Ըստ էության, նշված արժեքները պետք է դառնան յուրաքանչյուր սանի անհատականության մասնիկը, նրա անձնային հատկանիշների ձևավորման հիմքը:

Այսօր՝ հասարակության սոցիալ-տնտեսական արագ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրել են սոցիալական և անհատական արժեքների համակարգի որակական փոփոխությունների, որոնց համընթաց քայլող և դրանից բխող ուսումնա-դաստիարակչական խնդիրներն արդյունավետ լուծող կրթական համակարգ ունենալու արդի պահանջը հանգեցրել է հանրակրթության հարափոփոխման, իսկ արժեքների որակապես փոփոխման կամ նոր արժեքների առաջացման պայմաններում խնդիրն առավել սրվում է, որն էլ, կարելի է ասել, յուրաքանչյուր ուսուցչի առաջադրում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերի միջոցով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության բավականին բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա սովորողների համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ[5]:

Արագ տեղի ունեցող փոփոխություններն, ըստ էության, կապվում են գիտատեխնիկական արագընթաց զարգացմամբ, հասարակական կյանքի արագընթաց զարգացմամբ, համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացով, որն էլ կրթական համակարգին առաջադրում է նոր մարտահրավերներ՝ ժամանակի փոփոխությունների արդյունավետորեն և արագ արձագանքելու պահանջ: Վերջինս ենթադրում է կրթության բարեփոխում, կրթական առավել արդյունավետ մոդելների մշակում, արժեքային համակարգի բաղադրիչների հստակ սահմանում և դրանց ձևավորման քայլերի, սկզբունքների նախանշում:

[5] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը, էջ 360:

Հարկ է նշել, որ սովորողների արժեքային համակարգի ձևավորման և այն ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը ներկայումս դպրոցի գլխավոր առաքելությունը պետք է լինի: Դա կապվում է ստեղծված ներկայիս աշխարհաքաղաքական պայմանների հետ, երբ մեր երկիրը հայտնվել է ազգի անվտանգության ապահովման, պետական մտածելակերպ ունենալու, ապագայի մարտահրավերներին դիմակայելու խնդրի, մեզ փոխանցված արժեքների փոխակերպման վտանգի, ազգի ինքնության պահպանման խնդիրների առջև: Հենց այստեղ է, որ պետք է առանձնակի կարևորվի առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ համամարդկային ու ազգային արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Ներկայումս, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերակա ռազմավարության նշանակություն ունեցող հիմնախնդիր է դառնում ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը:

«Ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը և համարվում է հանրակրթության ոլորտի հիմնական գերխնդիրը»:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությանը և վերջինս առօրյա կյանքում վերամիաստավորելու նախնական փորձ ձեռք բերում: Մասնավորապես՝ կերպարվեստ առարկայի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

[6] Բաղդասարյան Է., Արժեքային վերակառուցումները ազգային կրթական բարեփոխումների համատեքստում, որպես Արցախյան շարժման ձեռքբերում, ԱրՊՀ, Գիտական ընթերցումներ, 2018(10), https://artsakhlib.am>2018/10, էջ 222:

Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է՝ առարկայի դասավանդման գործընթացում հասնել նրան, որ երեխան գիտակցի դրա կարևորությունը, օգտակարությունը, այն է՝ այդ գործընթացն ընկալի որպես ոչ միայն զուտ տվյալ դասանյութի, այլև այն ներկայացնող ազգերի ու ժողովուրդների արժեհամակարգի, մշակութային արժեքների ու կյանքի հիմնական առանձնահատկությունների իմացություն, և դրա հիման վրա՝ գնահատողական վերաբերմունք ձևավորի ինչպես վերջիններիս, այնպես էլ սեփական ժողովրդի ու երկրի մշակույթի, մտածելակերպի հանդեպ, կարողանա ճիշտ արժևորել ու վերագնահատել բարոյական, հոգևոր, համամարդկային ու ազգային արժեքները:

Կերպարվեստի ուսուցման ժամանակակից հայեցակարգը ներառում է ոչմիայն հոգևոր գիտելիքների, այլև դրանց միջոցով ավանդույթների, սովորույթների, ապրելակերպի, հավատալիքների, գաղափարախոսության, աշխարհի մասին (աշխարհայացք) պատկերացման, արժեքային համակարգի և շատ ավելիի» յուրացում: Որպես կանոն, ծանոթանալով նոր գիտելիքների՝ երեխաները բացի դրանք ձեռք բերելուց, հաղորդակցվում են նաև ազգային մշակույթին և հոգևոր հարստությանը:

1.2.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Ժամանակակից կրթության միտումը համարվում է ավանդականից անցումը դեպի կրթության անհատական-կողմնորոշիչ տիպին, որը կրթական տեխնոլոգիայի առավել բարձր մակարդակ է»: Այս տեսանկյունով՝ կարևորվում են սովորողի անհատական զարգացման գործընթացները, այդ թվում՝ արժեհամակարգի ձևավորումը: Կերպարվեստի ուսուցումը երեխայի առջև բացում է դեպի արվեստը տանող ճիշտ ճանապարհը՝ նրա համար բացահայտելով այն խնդիրներն ու նպատակները, որոնք նա պետք է դնի իր առջև արվեստի հետագա բարձրունքներին հասնելու համար:Այդ բարձրունքներին հասնում են միայն եզակիները:Այդուհանդերձ կերպարվեստի տարրական գիտելիքները նրանց անպայման օգնում են հասկանալու և գնահատելու գեղեցիկը և ավելի արդյունավետ լինելու իրենց ընտրած գործունեության բնագավառում: Հանրակրթական դպրոցում կերպարվեստի զանազան միջոցներով գեղարվեստական գերծունեության կազմակերպման համակարգում արժեհամակարգի ձևավորման առաջնային դերը,անշուշտ, պատկանում է կերպարվեստի ուսուցմանը:

Կերպարվեստից բացի ոչ մի այլ ուսումնական առարկա չի ապահովում այն գեղարվեստական գործունեությունը, որը կոչված է այսօրվա պահանջներով լիիրավ գեղագիտական կրթություն տալու, արժեքային համակարգ ձևավորելու և դաստիարակելու դպրոցականներին:

Դպրոցականի բուն գեղագիտական ունակությունների ձևավորումը սերտորեն կապված է նրա գեղարվեստական կրթության հետ, նրա բարոյական կերպարի, համոզմունքների, իդեալների ձևավորման հետ:Իսկ դա նշանակում է, որ գեղարվեստական գործունեությունը զգալիորեն ներազդում է անհատի արժեքային համակարգի ձևավորման վրա,այդ արժեքների կարգավորման և համակարգման վրա: Դպրոցականների գեղարվեստական գերծունեության ակտիվացումը ժամանակակից և հրատապ խնդիր է, որը պետք է լուծել զուտ գիտականորեն հիմնավորված մեթոդներով ու եղանակներով:

Կերպարվեստը դպրոցականների գեղարվեստական գործունեության հիանալի միջոց է:Բնության տարբեր վիճակները նկարելիս դպրոցականը առարկայական

ածխարհը դիտարկելեւ և ուսումնասիրելու միջոցավ մեծ հետաքրքրություն է հանդես բերում բնության գեղեցկության, գույների և ձևերի հարստության ու բազմազանության նկատմամբ: Նա տեսնում է ամբողջի և մասի հարաբերության համաչափությունը,ընկալում է բնության գունային երանգների ռիթմն ու ներդաշնակությունը:Ակտիվացնելով դպրոցականների գեղարվեստական գործունեությունը՝ միաժամանակ մենք լուծում ենք գեղագիտական դաստիարակության խնդիրները: Այդ նպատակին հասնելու համար նկարիչ- մանկավարժը պետք է լավ տիրապետի դպրոցականների հետ աշխատելու մանկավարժական մեթոդներին, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վարման սկզբունքներին ու հնարներին:Այսպիսի մեթոդիկայի հմուտ կիրառման պայմաններում միայն կերպարվեստը կարող է դրսևորել իր կրթական ու դաստիարակչական նշանակությունը, առավել ակտիվ ու նպատակային դարձնել դպրոցականների գեղարվեստական գործունեությունը և արժեհամակարգի ձևավորումը:

Հաշվի առնելով ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևորությունը ներդաշնակ ձևավորված անհատի համար՝ դեռ հին ժամանակներից խիստ ուշադրություն է դարձվել ուսումնական և դաստիարակչական աշխատանքների վրա: Սկսած Սպարտա և Աթենա դաստիարակոըթյունից՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների խմբի մեջ է մտել կերպարվեստ առարկան: Ստրկատիրական հասարակարգից սկսած՝ այն դարձել է հիմնական գործոն,որը հնարավորություն է տալիս մարդու քաղաքակրթության բարձրացմանը:Կերպարվեստը այն հիմնարար գիտությունն է, որով կարողանում են զբաղվել՝ բժիշկը, քաղաքագետը,բնագետը և բոլոր մնացած մասնագիտությունների մարդիկ: Այն օգտակար է այնքանով, որքանով ազդում է մարդու կեցության, նրա առօրյայի վրա:Արժեքային համակարգի ձևավորման և գեղագիտական բոլոր գործոնները պարունակում են կերպարվեստի ուսումնական գործընթացում:Գեղեցիկ ձեռագիր ունենալը, գեղեցիկ հագնվելը,գեղեցիկ հարաբերվելըև ստեղծագործելը համարվում են անհատի դաստիարակության հիմնական պայմանները,որը և մենք ստանում ենք կերպարվեստի ուսումնադաստիարակչական հնարավորությունների առկայության դեպքում:

ԳԼՈՒԽ 3

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գեղարվեստական կրթության բովանդակությունը և հիմնական մեթոդաբանական սկզբունքները պետք է համապատասխանեն հասարակության զարգացման հրատապ խնդիրներին, համաշխարհային մշակութային գործընթացին, անհատի հոգևոր պահանջմունքների բազմակողմանի բավարարմանը: Կերպարվեստը մեծ հնարավորություններ ունի գեղագիտական դաստիարակության գործում: Աշխարհի ճանաչողությունը կերպարվեստի միջոցների՝ գծի, գույնի ու կերպարների օգնությամբ, թույլ է տալիս միջավայրը՝ ընդհանրացնել նաև հայրենի բնության մեջ: Սա մեր աշխարհագրական տարածքն է՝ ազգամշակութային բազմադարյան շերտերով, իր քարակերտ և ձեռակերտ կոթողներով: Այն ազգի լեզուն է ու կենցաղը, նրա հանճարի բազմաբովանդակ պատմությունը: Ահա սա է այն իրական և բնական միջավայրը, որը պարտավոր ենք ներկայացնել որպես հենք՝ գեղագիտական դաստիարակության խնդիրներն իրականացնելու համար: Գեղարվեստական կրթությունը հանրակրթական դպրոցում կոչված է լուծելու սովորողների գաղափարական գիտակցության, աշխատանքային և գեղագիտական դաստիարակության, ճաշակի զարգացման, բնության, պատմական և մշակութային հուշարձանների պահպանության գիտակցության ձևավորման, ինչպես նաև հոգևոր և բարոյական մի շարք խնդիրներ:

Ելնելով դաստիարակության ընդհանուր խնդիրներից՝ հանրակրթական դպրոցում կերպարվեստի դասավանդման հիմնական նպատակներն են.

- Օգնել երեխաներին ճանաչելու շրջապատող աշխարհը, զարգացնել նրանց դիտողականությունը,
- ձևավորել տրամաբանական մտածողություն, ինչպես նաև տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունք,
- բացահայտել մարդկանց կյանքում ստեղծագործական աշխատանքի նշանակությունը:
- տալ աշխարհի գեղագիտական ընկալման ճիշտ կողմնորոշում,
- զարգացնել տարածական մտածողություն, պատկերային երևակայություն ,
- աշակերտներին ծանոթացնել ազգային մշակույթի ստեղծագործություններին,
- գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ սերմանել հետաքրքրություն և սեր:

Կերպարվեստն օգնում է երեխաներին տեսնելու աշխարհը ավելի ընդարձակ և բազմակողմանի: Առարկայի դասավանդումը լուծում է երկու փոխկապակցված խնդիր՝

- տեսողական ընկալունակության զարգացումը, տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունքը:
- տեսողական ընկալունակությունը աշակերտի կողմից ուշադիր դիտելու կարողությունն է՝ համեմատելով առարկաներն ու երևույթները, բացահայտելով նմանություններն ու տարբերությունները, առարկաների նյութի ու ձևի դասակարգումը:

Տեսածի նկատմամբ գիտակցական վերաբերմունքը բավականին բարդ գործընթաց է, սակայն կերպարվեստի դասավանդման մեջ առաջնային դեր ունի: Վերջինիս դերը շատ կարևոր է հատկապես մանկական տարիքում, երբ երեխան նոր է սկսում հասկանալ և գիտակցել իրեն շրջապատող իրականությունը:

Կրթական նշանակությունը

Արվեստն ընդհանրապես և կերարվեստը՝ հատկապես, իրենց մեջ խտացնելով շրջապատող իրականության ամենատարբեր երևույթները,, այդ թվում «մարդ- շրջապատող առարկայական աշխարհ» բազմաբնույթ փոխհարաբերությունները, իրենց վրա են ստանձնում անձի կրթության և դաստիարանության առանցքային դերը: Իր յուրահատկության և բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ,

«Կերպարվեստը» կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զագացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումըորումը

Կերպարվեստի տարբեր տեսակներին հաղորդակցվելը և ինքնուրույն գեղարվեստական գործունեություն նաաստում է՝

- իրականության՝ գիտակցական և զգայական ընկալման ձևավորմանը,

- վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, անձի ինքնաճանաչմանը, ինքնարտահայտմանը և մտահորիզոնի ընդլայնմանը,
- սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը,
- ազգային-հայրենասիրական և մարդասիրական զգացումների արմատավորմանը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է

- երեխայի անձի զարգացումը,
- ինտելեկտի և ընդհանուր կուլտուրայի, ինչպես նաև ուսումնական գործունեության ձևավորում,
- յուրաքանչյուր աշակերտի անհատական հնարավորությունների բացահայտում և այդ հիմքով շերտավորված ուսուցման կազմակերպում,
- ստեղծագործական կարողությունների զարգացում ,
- գեղարվեստական ստեղծագործության հուզական-գեղագիտական ընկալում, ծանոթություն գեղարվեստական որոշ հասկացությունների,
- խոսքի զարգացում,
- նկարչական հմտությունների ձևավորում,
- արժեքային համակարգի ձևավորում:

Նպատակներն են՝

✓ Զարգացնել և ներդաշնակել ընկալման տրամաբանական և հուզական կողմերը:

✓ Զարգացնել երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նրբանկատությունը, աշխատասիրությունը,դյուրազգացությունը, հանդուրժողականությունը:

✓ Ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և արարելու ցանկությունը և կարողությունը:

- խոսքի զարգացում,
- նկարչական հմտությունների ձևավորում,
- արժեքային համակարգի ձևավորում:

Նպատակներն են՝

- ✓ Սովորեցնել գործնականորեն կիրառել գեղարվեստական գործունեության ընթացքում ձոռք բերված գիտելիքները և կարողությունները:
- ✓ Արմատավորել ցանկացած գործունեության նկատմամբ ստեղծագործ վերաբերմունք դրսևորելու կարողությունը:

Խնդիրներն են.

- ✓ Ընդլայնել երեխաների աշխարհայացքը: Զարգացնել գեղագիտական և գեղարվեստական ընկալունակությունները:
- ✓ Սովորեցնել համեմատել իրականը երևակայական ստեղծագործության հետ:

Հիմնական սկզբունքներն են.

- ✓ Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության անհրաժեշտություն բոլոր սովորողների համար:
- ✓ Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության լավագույն ավանդույթների պահպանում և արդիականացում:
- ✓ Կերպարվեստի դասավանդում իրատեսական հիմքի վրա:
- ✓ Դիդակտիկայի սկզբունքների կիրառում:
- ✓ Յուրաքանչյուր աշակերտի համար մատչելիության ապահովում:
- ✓ Սովորողների ակտիվ և ազատ ստեղծագործական գործունեության խրախուսում:
- ✓ Առարկայի դասավանդման ընթացքում «գիտելիքի ձեռքբերում, գործնական կիրառում, արժեքային համակարգի ձևավորում» շղթայի

անքակտելիության ապահովում:

Ծրագրերում առարկայի բովանդակային գծերը տարածվում են միասնաբար և փոխկապակցված ձևով, ամբողջական թեմաների միջոցով: Թեմաներից յուրաքանչյուրի համար նախատեսված է որոշակի ժամաքանակ, թեմայի բովանդակություն, դրան վերաբերող կրթական հիմնական խնդիրները, ինչպես նաև սովորողների համարակնկալվող որոշչային գիտելիքները,

կարողություններն ու հմտությունները: Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների գեղարվեստական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտարկվելու են որպես բոլոր թեմաների ուսուցմանն ուղեկցող խնդիրներ:

Հանրակրթական դպրոցում «Կերպարվեստի» ծրագրերը հաշվի են առնում սովորողների բնական զարգացման ուղիները, այն դերը, որ խաղում է գեղարվեստական գործունեությունը: Գեղարվեստական գործունեությունը չի կարելի նույնացնել դպրուցում դասավանդվող մյուս առարկաների հետ, որտեղ ուսումնառությունն ընթանում է խիստ ուղղորդված պարզից բարդ սկզբունքով: Եթե դպրոցի առաջին իսկ տարիներից ուսուցումը սկսվի «գծանկարչական գրագիտությունից», այլ ոչ թե «ստեղծագործելու բերկրանքից», եթե առաջին իսկ դասերից աշակերտներին ներշնչենք, որ հարկավոր է առարկաները պատկերել գրագետ, այնպես, ինչպես մեծերը, նշանակում է երեխաների մեջ խեղդել կյանքի նկատմամբ կենդանի հետաքրքությունը, գեղարվեստական գործունեության նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը: Ստեղծագործելու, փորձարկելու, ինքնուրույն հայտնագործություններ կատարելու բերկրանքը այն կարևոր արժեքներն են, որ աշակերտը ձեռք է բերում սովորելու առաջին տարիներին: Ոչինչ մարդուն այդքան հաճույք, երջանկության զգացում և սեփական ուժերի նկատմամբ վստահություն չի ներշնչում, որքան ստեղծագործական աշխատանքը:

Գրաֆիկական աշխատանքի ուսուցման մեթոդներ

Կերպարվեստի ուսուցման գործընթացում հիմնականում կիրառվում է գրաֆիկական աշխատանքի ուսուցման մեթոդները: Դասաժամի ամենաքիչ բաժինը ընկնում է խասքային մեթոդին: Այս առումով ուսուցչի աշխատանքը գրատախտակի վրա կարևորվում է այնքանով, որ երեխաները առկա տեսնում են այն պատկերները, որոնք մտահոգում են իրենց առաջադրանքները կատարելու համար: Մանկավարժ — նկարիչը այս մեթոդիկան կիրառելիս օգտվում է իր մասնագիտական կարողություններից՝ պարզ գեղեցիկ միջոցներով պատկերել այն հարցի պատասխանը, որը առաջադրվում է դասարանի կողմից: Ուսուցչի արագ և վարժ կատարումը խրախուսանք է աշակերտների հանդեպ: Այն պարտավորեցնում է ուսուցչին միշտ վարժ լինել ճեպանկարների և կոմպոզիցիաների ստեղծման գործընթացում: Դանդաղաշարժությունը, պատկերի աղավաղումը հիասթափեցնում են աշակերտին, և նրանք դադարում են հարգել մանկավարժին: Գրատախտակին աշխատելու հիմնական նպատակը դասարանին մեկ անգամ ևս հուշում է աշխատանքի դժվար մասերը ընկալելի դարձնելու համար: Այն կարելի է կատարել մեծ թղթերի վրա - փետրագրիչներով կամ գունավոր կավիճներով, մատիտներով: Գրատախտակի վրա աշխատելու կուլտուրան պահանջում է, որ ուսուցիչը պատկերի այն հիմնական հանգույցը, որը կարևորում են աշակերտները:

Կոմենսկին ասել է. «Ուսուցիչը պետք է ոչ միայն բացատրի և պատմի տեսականորեն, որ նյութը ըմբռնվի միայն լսողությամբ, այլ նաև պատկերի, որ նյութը տպավորվի աշակերտի երևակայության մեջ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը անձի համակողման զարգացման կարևորագույն առանցքն է և նրա համալիր դաստիարակության վերջնարդյունքը:

2. Արժեքների հանդեպ ճիշտ վերաբերմքունքը ու դրա կարևորության գիտակցումը արմատավորվում են տարրական դպրոցում, ուստի հարկավոր է մայրենիի դասաժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել նաև տարրական դասարաններում՝ դրանք նպատակաուղղելով ինչպես երեխաների գիտելիքների, կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:

3. Առարկայի՝ կերպարվեստի , կրթական նշանակությունն ու դասավանդման կարևորությունը արդեն նշել եմ աշխատանքի գրական ակնարկում, որտեղ մանրամասնորեն ցույց եմ տալիս կերպարվեստի հնարավոր ազդեցությունը սովորողի արժեքային համակարգի ձևավորման ու դաստիարակման վրա: Եվ պատահական չէ, որ «Կերպարվեստ» առարկան սովորողին դասավանդվում է միջնակարգ դպրոցում, այսինքն՝ դա խթանում է երեխայի զարգացմանն ու աճմանը:

Այս ամենը հավաստում է, որ առարկայի՝ Կերպարվեստի , դասավանդումը անմիջապես կապված է աշակերտների մտահորիզոնի զարգացման ու նրանց մեջ արժեքային համակարգի ձևավորման վրա:

Օգտագործված գրականության ցանկ

- Անի Խուդոյան «Երեխաների հետ հոգեբանական աշխատանքների ուղեցույց»,(Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար), Երևան, 2018
- Մարիամ Պետրոսյան «Կերպարվեստ», Ուսուցչի ձեռնարկ 1-4, Երևան, 2014
- Լեմս Ներսիսյան «Բնանկար» , Երևան, 2011
- Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ. Պետրոսյան,

«Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար», Երևան, 2004, ԿԱԻ հրատարակչություն

- Ն. Վ. Վոլկով « Առարկայական աշխարհի արվեստ», Մոսկվա, 1977
- Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես Երևան 2014 թ .:
- Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը,

«Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,